ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՀՀ-ՈՒՄ

ՀԱԿՈԲՅԱՆ Գ. Լ.

Բազմաթիվ վիճակագրական տվյալներ վկայում են այն մասին, որ Հայաստանն ունի ժողովրդագրական խնդիրներ. այդ իրավիճակը հատկապես մտահոգիչ են դարձնում ցածր ծնելիությունը, ծերացումն ու միգրացիան: Ժողովրդագրական վարքագծի դրական մոտիվացիան, առաջին հերթին, պետք է խրախուսվի պետության կողմից[1]: Եվ կարծես ժամանակին առիթ է ստեղծվել ՀՀ-ի համար՝ իրապես վերլուծելու իրավիճակը և լուրջ քայլեր ձեռնարկելու երկիր ժամանած սիրիահայերի ներուժն ըստ արժանվույն գնահատելու ուղղությամբ՝ չանտեսելով նրանց Հայաստան բերող բոլոր շարժառիթները և Հայաստանից մեկնելու բոլոր պատճառները: Մարդկային ի՞նչ ներուժի մասին է խոսքը, սեռատարիքային ի՞նչ կազմով, մասնագիտական ու կրթական ի՞նչ բազայով է ներկայանում սիրիահայ համայնքը Հայաստանում, ի՞նչ կազմ ունեն սիրիահայ ընտանիքները. այս հարցերի ամփոփ վերլուծությունն է տրվում սույն հոդվածում:

Սիրիահայ համայնքն առավել հզոր, կայացած, բազմաշերտ ու կայուն հայ համայնքներից մեկն է աշխարհում: Հայերը Սիրիայում (Ասորիքում) բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից: Տիգրան Բ Մեծի օրոք Ասորիքի զգալի մասը որոշակի ժամկետաժամանակ (մ.թ.ա. 80-60-ական թթ.) ընդգրկվել է հայկական տերության կազմում: Հայկական աղբյուրները հիշատակում են, որ այդ ժամանակ հայերի մեծ գաղթ է տեղի ունեցել դեպի Սիրիայի հյուսիսային շրջաններ[2]: Ս. Գասպարյանն իր աշխատությունում նշում է, որ հայերի գաղթը արաբական երկրներ պայմանավորված էր ոչ միայն Հայաստանի արտաքին կապերով, այլև Բյուզանդական կայսրության և արաբական խալիֆաթում հայերի գրաված դիրքով[3]:

Սիրիահայ համայնքը մեծապես համալրվել է 1915 թ. Հայոց ցեղասպանութ-յունից մազապուրծ գաղթականներով: Սկզբնական շրջանում Սիրիայում հայ գաղթականներն ապրել են ծանրագույն պայմաններում՝ հիմնականում վրանային ճամբարներում: Բնական է, որ սկզբնական փուլում հայերը մտադրություն չէին ունենա վերջնականորեն հաստատվել Սիրիայում, որտեղ նրանք հայտնվել էին միանգամայն նոր, ինչ-որ իմաստով խորթ մի միջավայրում, որն ուներ տարբերակիչ*

---

[1] *Միջազգային փորձագիտության մեջ ընդունված են դրական մոտիվացիայի երեք տեսակներ՝ նյութական, սոցիալական և հոգեբանական:*

[2] **Աբրահամյան Ա.Գ.,** *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.Ա, Ե.,1964, էջ428:*

[3] **Գասպարյան Ս. Տ.,** *Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Ե., 1962, էջ 166:*

մի շարք գործոններ՝ էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային և այլն: Սակայն հետագայում նրանք հաշտվեցին Սիրիայում հաստատվելու իրականության հետ, իսկ նշված գործոնները նպաստեցին հայ տարագիրների էթնիկ և մշակութային ինքնության պահպանմանը[4]:

Հայերը ժամանակի ընթացքում սկսեցին ինքնակազմակերպվել որպես համայնք, ցուցաբերեցին քաղաքական կազմակերպվածություն՝ինտեգրվելով նաև Սիրիայի հասարակական կյանքում: Աստիճանաբար տարագիրների զանգվածը վերածվեց կազմակերպված ու կենսունակ համայնքի, որը ձգտում էր ամեն կերպ պահպանել ազգային ինքնությունը: Այս գործընթացում զգալի ներդրում ունեցավ Հայ առաքելական եկեղեցին, որը, իր բուն գործառույթներին զուգահեռ, բացառիկ դեր խաղաց հայերի հավաքագրման, նրանց օգնություն տրամադրելու գործում: Եկեղեցու հովանու ներքո էր Աղքատախնամ հանձնախումբը, որը համակարգում էր տարագիրներին տրամադրվող օժանդակությունը: Հայերի շրջանում ակտիվ գործունեություն էին ծավալում նաև հայկական հայրենակցական, մշակութային ու բարեգործական միություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև ազգային քաղաքական կուսակցությունները (Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Ռամկավար ազատական և Հայ հեղափոխական դաշնակցություն), որոնք համայն-քային խնդիրների լուծման նպատակով համագործակցում էին եկեղեցու հետ[5]:

Սիրիայում հայերի մեծ մասը ապրում էր Հալեպում, համեմատաբար փոքր զանգված կենտրոնացած էր նաև Կամիշլիում, Դամասկոսում, Արաբ-Բունարում, Թարապլուսում, Տրրպեսյայում, Հոմսում, Տեր-Զորում, Քեսաբում և մյուս վայրերում: Մինչ պատերազմը Սիրիայում հայ համայնքը պաշտոնապես հաշվվում էր 100.000 մարդ: Համայնքի թվակազմի վերաբերյալ շրջանառվում էին նաև ավելի նվազ տվյալներ՝ 50.000-80.000 մարդ[6]:

Ըստ մեր անցկացրած էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների[7]՝ այսօր Հայաստանում էլ սիրիահայերի մեծ մասը Հալեպի հայ համայնքի ներկայացուցիչներ են՝ մոտ 85%, և միայն 5.5%-ն են Դամասկոսի հայերը: 2014 թվականի ընթացքում Հայաստանում են ապրել նաև Քեսաբից, Կամիշլիից, Ռաքքայից, Տեր-Զորից եկած հայերը: ՀՀ-ում գտնվող հալեպահայերի 4.5%-ը

---

[4] **Гриншилдс Х. Т.** *Поселение армянских беженцев в Сирии и Ливане в 1915-1939 гг., Е.,1982, т. 2, с. 10.*

[5] **Дятлов В., Мелконян Э.** *Очерки социокультурной типологии.Армянская диаспора, Е., 2009, с.112.*

[6] **Փաշայան Ա., Հարությունյան Լ.,** *Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Ե., 2011, էջ13:*

[7] *Էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդաբանությամբ՝ 184 քանակական հարցում և 36 խորին հարցազրույցներ սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևանում և մարզերում՝ 2014 թվականի ընթացքում: Առաջին մեթոդի դեպքում սեռա-տարիքային կազմի ներկայացուցչությունն ապահովելու համար ընտանիքից պատահականորեն ընտրվել է մեկ հոգի՝ ըստ ծննդյան սկզբունքի, (հարցման օրվան նախորդող ամենամոտ օրը ծնված), իսկ խորին հարցազրույցներն անցկացվել են ըստ սեռի, տարիքի և զբաղվածության չափանիշների:*

Հայաստան է տեղափոխվել երրորդ երկրից՝ Լիբանանից (Բեյրութ), Քուվեյթից, որտեղ որոշ ժամանակ ապրելուց հետո նրանք որոշել են տեղափոխվել հայրենիք:

Հալեպի հայ բնակչությունը մասնակցել է քաղաքի տնտեսական կյանքի բոլոր ոլորտներին: Այստեղ կան մեծ թվով բանվորներ, որոնք զբաղված են գլխավորապես տեքստիլ արդյունաբերության մեջ, արհեստավորներ՝ ոսկերիչ-ներ, դերձակներ, կոշկակարներ և այլն: Զգալի է առևտրականների թիվը: Որոշ հայեր հասել են տնտեսական բարձր դիրքի և ունեն իրենց խոշոր խանութները, գործարանները և այլ արդյունաբերական ձեռնարկություններ[8]:

Սիրիայի, մասնավորապես Հալեպի հայ համայնքը դարձել է նաև արևմտահայերենի և արևմտահայ մշակույթի պահպանման ու զարգացման ամենակարևոր ու բացառիկ օջախներից մեկը ողջ Սփյուռքում: Սիրիայում հայերն իրավունք են ստացել կազմակերպելու իրենց ազգային կյանքը, ազատորեն դավանելու սեփական կրոնը, սովորելու մայրենի լեզուն, զարգացնելու հայկական մշակույթը:

Այսպիսով, Սիրիան այն երկիրն է, որը ցեղասպանությունից հետո ընդունել է մեծ թվով հայերի, և որտեղ հայերը բնակություն են հաստատել ինչպես իրենց տանը, իսկ այսօր հայրենիքը կանգնած է նրանց ընդունելու խնդրի առջև: 2012 թվականից ի վեր Սիրիայում տեղի ունեցող պատերազմի պատճառով շատ հայեր են տեղափոխվել ՀՀ[9]: Ստեղծված իրավիճակում հայրենիքն ընտրելու դրդապատճառները տարբեր են, սակայն արդի իրականությունում Հայաստանը հայրենիքի գաղափարից կարծես վերածվել է ժամանակավոր ապաստանի գաղափարի: Բազմաթիվ վերլուծություններ և փորձագիտական գնահատական-ներ հանգեցնում են այն մտքին, որ եթե բավարար պայմաններ չստեղծվեն Հայաստանում սիրիահայերի բնակության և լիարժեք ինտեգրման համար, ապա ժամանող հայրենադարձները կլքեն վաղուց երազած հայրենիքը: Սակայն հայրենադարձության եզրույթի մասին խոսելիս նաև պետք է հաշվի առնել, որ այն երկկողմանի գործընթաց է, որում կարևորվում են «հայրենադարձվողների» մտադրություններն ու ցանկությունները:

Էթնոսոցիոլոգիական հետազոտության տվյալների վերլուծությամբ բացահայտվել են սիրիահայերի՝ Հայաստանն ընտրելու հետևյալ դրդապատճառները.

1. *հայրենիքի գաղափարը, հայ լինելու հանգամանքը՝* ***38%.***
2. *ուրիշ ելք չկար, մյուս երկրները մուտքի թույլտվություն չէին տալիս՝* ***18.5%.***
3. *սոցիալական ցանցի առկայությունը՝* ***7.8%*** *(բարեկամներ/ հարազատներ/ծանոթներ ունենք).*

---

[8] **Գասպարյան U. S.,** *նշվ. աշխ., էջ 170:*

[9] *Ըստ ՀՀ Սփյուռքի նախարարության տրամադրած տվյալների, որոնք փոխանցվել են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 2014 թ. փետրվարի 13-ի թիվ 2470-34 գրությամբ, 2014 փետրվարի դրությամբ Հայաստանում բնակվում է շուրջ 11.000 սիրիահայ, մոտ 2.800 ընտանիք (տվյալները փոփոխական են և մոտավոր):*

4. *ընտանիքի անդամները նախօրոք տեղափոխվել էին կամ վաղուց ապրում են ՀՀ-ում՝ **7.8%.***
5. *Հայաստանում ապահով, անվտանգ է՝ **7%.***
6. *լեզվին տիրապետում ենք՝ **6%.***
7. *շրջագայության նպատակով կատարած այցից հետո չենք վերադարձել Սիրիա՝ **6%.***
8. *աշխատանքի հեռանկար ՀՀ-ում՝ **2%.***
9. *այլ պատճառներ (եկել ենք ՀՀ՝ երրորդ երկիր գնալու նպատակով, մենք չենք ընտրել և այլն)՝ **6%:***

Տվյալներից նկատելի է, որ Հայաստան տեղափոխվելու որոշում կայացնելու գործընթացում սիրիահայերի համար հայրենիքի գաղափարը առաջնային է մյուս պատճառների նկատմամբ: Եզրակացություններ անելիս չի կարելի անտեսել հարցի զգացմունքային կողմը: Այստեղ տեղին կլինի միայն հավելել, որ հարցմանը մասնակցած սիրիահայերի մեծ մասը՝ 70.7%-ը, Հայաստանն է համարում իր հայրենիքը, 22.8%-ը՝Սիրիան:(Հարցին դժվարացել են պատասխանել 6.5% սիրիա-հայեր):

Դրդապատճառների մեջ հաջորդ մեծ պատասխանը (18.5%) ունի հարկադրական երանգ, երբ այլ ելքերի բացակայության պայմաններում սիրիահայը ստիպված լքում է պատերազմի մեջ գտնվող երկիրը և գալիս Հայաստան: Մի կողմից՝ պատահական, մյուս կողմից՝ հարկադրական հարթության մեջ պետք է դիտարկել այն պատասխանը (6%), ըստ որի 2012 թվականի ամռանը շրջագայության նպատակով Հայաստանում գտնվող սիրիահայերը պատերազմի պատճառով չեն կարողացել վերադառնալ Սիրիա:

Պատասխանների մեծ մասը, համենայն դեպս, վկայում է ստեղծված իրավիճակը նրանց կողմից ռացիոնալ գնահատելու մասին՝ սոցիալական ցանցի առկայություն, հայերենին տիրապետում, աշխատանքի հեռանկար, Հայաստանի՝ ապահով, անվտանգ լինելու փաստ, Հայաստանը՝ որպես տարանցիկ երկիր և այլն:

Հարցի՝ սեռային բնութագրիչի հետ համադրումից պարզվում է, որ հայրենիքի գաղափարը ավելի կարևորվել է հարցմանը մասնակցած սիրիահայ կանանց մոտ, քան տղամարդկանց մեջ: Նույն տոկոսային հարաբերակցությունն է առկա, երբ հարցը վերաբերում է ՀՀ տեղափոխվելու համար ընտանիքի անդամների կամ հարազատների՝ արդեն Հայաստանում գտնվելու փաստին: Հակառակ պատկերն են ցուցադրում արական սեռի ներկայացուցիչները, քանզի ռացիոնալ տարր է նկատվում նրանց պատասխաններում. տղամարդիկ են, որ Հայաստան տեղափոխվելու համար կարևորել են սոցիալական ցանցի և գործնական/առևտրային կապի առկայությունը Հայաստանում (համապատասխանաբար 4 և 3 անգամ ավելի իգական սեռի ներկայացուցիչներից):

Էթնոսոցիոլոգիական հետազոտության տվյալների վերլուծության համաձայն՝ սիրիահայ բնակիչների կազմը Հայաստանում ըստ սեռատարիքային չափանիշի հետևյալն է (աղյուսակ է).

Աղյուսակ 1. Սիրիահայ բնակչությունը ՀՀ-ում՝ ըստ սեռատարիքային խմբերի. %

Տարիք / Սեռ	0-7	8-12	13-17	18-35	36-55	56<	Ընդամենը
Արական	6.8	2.5	3.0	12.5	13.4	7.4	45.6
Իգական	6.0	4.6	3.3	16.1	14.0	10.4	54.4
Ընդամենը	12.8	7.1	6.3	28.6	27.4	17.8	100

Աղյուսակ 1-ի տվյալներից նկատելի է, որ անչափահաս բնակչությունը կազմում է ընդհանուրի մոտ 1/4 մասը՝ 26.2%, որի մոտավորապես կեսը (12.8%) 0-7 տարեկան մանուկներն են: Հայաստանում ծնելիության աճի ցուցանիշի վրա փոքր, սակայն դրական ազդեցություն են ունեցել նաև սիրիահայերը, քանի որ այդ խմբի մեջ 1.4%-ը այն մանուկներն են, որոնք ծնվել են Երևանում: Մեկ ուրիշ համադրությամբ առավել ուրախալի ցուցանիշ է ստացվում, քանի որ նրանք 1/3 մասն են կազմում Սիրիայից եկած այն հայերի, որոնց ծննդավայրը Երևանն է:

Այստեղ հատկանշական է երիտասարդ սերնդի ներկայացուցիչների թիվն ընդհանուր կազմում, քանզի շատ կարևոր է նաև նրանց դերը Հայաստանի ժողովրդագրության առկա մակարդակը գնահատելու տեսանկյունից: Խոսքը ամուսնությունների թվի աճի և դրանից բխող այլ դրական հետևանքների մասին է, որոնք կարող են գրանցվել, եթե սիրիահայ երիտասարդներն իրենց ապագան կա-պեն հայրենիքի հետ: Երիտասարդական ներուժի կարևորությունը հաստատվում է նաև մեկ այլ ցուցանիշով, որը դուրս է բերվել ամուսնական կարգավիճակի վերլուծության շնորհիվ: Սիրիահայ չափահաս բնակչության մոտ 25%-ն ամուրի է, ընդ որում, ամուրիների 81%-ը հենց այդ տարիքային խմբում է:

Միջին սերնդի ներկայացվածությունը սիրիահայերի ընդհանուր խմբում ևս բավական մեծ է՝ 27.4%, որը մոտ 10%-ով ավելի շատ է ավագ տարիքային խումբը ներկայացնող ցուցանիշից: Նշենք, որ այս խմբում ևս կան ամուրիներ. 36-45 տարիքային խմբում են չամուսնացածների 12%-ը, իսկ 46-55-ում՝ նախորդից կիսով չափ պակաս[10]: Ամուսնական կարգավիճակի հարցը համադրելով սեռային բնութա-

[10] Ամուրիների 1%-ը ավագ սերնդի ներկայացուցիչներ են:

գրիչի հետ՝ նկատում ենք, որ չամուսնացած տղամարդիկ ավելի են կանանցից՝ 54 (արական) և 46 (իգա-կան) տոկոսային հարաբերակցությամբ:

Սիրիահայ չափահասների 64%-ն ամուսնացած է[11], ընդ որում սիրիահայ ավանդական համայնքի շրջանում ամուսնությունը պարտադիր օրինվում է եկեղեցում, կատարվում է նաև պետական գրանցում:

Ըստ հետազոտության արդյունքների՝ Հայաստանում ապրող սիրիահայ մեկ ընտանիքում անդամների քանակը հետևյալն է.

Գրաֆիկ 1. Սիրիահայ ընտանիքներում անդամների քանակը, 2014 (%)



Ըստ գրաֆիկ 1-ի՝ մեծ տոկոս են կազմում այն ընտանիքները(մոտ 34%), որտեղ անդամների թիվը 4-ն է (ընտանիքում անդամների միջին թիվն էլ մոտավորապես 4-ն է՝ 3.98): Գրեթե հավասարաչափ բաշխվածություն ունեն 2, 3, 5, 6 և ավելի անդամներ ունեցող ընտանիքները, համապատասխանաբար՝ 15.2%, 15.2%, 16.3%, 15.2%: Հետազոտությանը մասնակցել են նաև մենակ ապրողներ, որոնք սիրիահայ ընտանիքների 4.3%-ն են (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Սիրիահայ ընտանիքների կազմը (%)

1.	Մենակ ապրողներ	4.3
2.	Ամոլ ընտանիքներ՝ ամուսիններ առանց երեխաների	10
3.	Երկսերունդ ընտանիքներ՝ ծնողներ, երեխաներ	41.3
4.	Ծնողներից մեկը, երեխաներ	12
5.	Եռասերունդ ընտանիքներ՝ ծնողներ, զավակներ, թոռներ	18.5
6.	Քույր/եղբայր և ազգականների հետ համատեղ բնակություն	13.9

Աղյուսակ 2-ի տվյալներից նկատելի է, որ Հայաստանում գտնվող սիրիահայ ընտանիքների մեծ մասը՝ 41.3%-ը, երկսերունդ ընտանիք է, որտեղ ապրում են ծնողներն իրենց երեխաների հետ: Հարցը համադրելով ընտանիքի անդամների քանակի հետ՝ նկատում ենք, որ նման ընտանիքներում առավելագույնը երեք երեխա կա, ընդ որում, նրանց 50%-ը երկու երեխա ունի, իսկ մեկ երեխա ունեցողների թիվը 1.5 անգամ մեծ է երեք երեխա ունեցող ընտանիքների թվից:

[11] *Սիրիահայ չափահասների մնացած 10%-ը այրիներն են և շատ փոքր զանգված՝ ամուսնալուծված զույգերը (1%):*

Սիրիահայ ընտանիքներում հաջորդ մեծ զանգվածը՝ 18.5%-ը, եռասերունդ ընտանիքն է, որտեղ ավագ սերնդի ներկայացուցիչներն ապրում են իրենց զավակների և թոռների հետ: Այստեղ անդամների թիվը տատանվում է 4-7 միջակայքում:

Տվյալներից նկատելի է, որ 12% ընտանիքներում բացակայում է ծնողներից մեկը՝ հայրը, որն աշխատելու նպատակով գտնվում է Հայաստանից դուրս: 10% ընտանիքներում ամուսնական զույգերն ապրում են առանց երեխաների: Հաշվի առնելով ստեղծված կենցաղային պայմանները՝ սիրիահայ ընտանիքների 13.9%-ը Հայաստանում բնակվում է այնպիսի կազմով, որով չի բնակվել Սիրիայում՝ խաղաղ պայմաններում: Այդ ընտանիքներում մեկ հարկի տակ ապրում են քույրեր և եղբայրներ՝և՛ ամուսնացած, և՛ չամուսնացած կարգավիճակով, և՛ ազգականներ:

Ըստ հետազոտության արդյունքների՝ սիրիահայերի մեծ մասը (63%) արտերկրում չունի ընտանիքի անդամ, իսկ 37% ընտանիքներում բացակայում են 1-5 անդամներ,[12] որոնք տարբեր երկրներում են: Երկրների ցուցակում ամենամեծ մասը (61%), բնականաբար, զբաղեցնում է Սիրիան, քանի որ հայերին այդքան հարազատ դարձած երկիրը դժվար պահին չլքելու ցանկությունը, Հայաստան տեղափոխվելու կասկածները, ի վերջո, սեփականության կորստի վախը ոմանց դեռ ստիպում են մնալ պատերազմական վտանգի մեջ: Իսկ ոմանք, տեղավորելով ընտանիքը Հայաստանում, մեկնել են աշխատանքի արաբական երկրներ՝ Լիբանան(8%), Դուբայ(8%), Քուվեյթ(5%), Սաուդյան Արաբիա, նաև ոչ արաբական երկրներ՝ Վրաստան, Գերմանիա, ԱՄՆ և այլն:

Աղյուսակ 3-ում ներկայացված է սիրիահայերի կարգավիճակի համեմատական նկարագիրը Հայաստանում 2014 թվականին և Սիրիայում՝մինչև պատերազմը:

Աղյուսակ 3. Սիրիահայերի կարգավիճակի համեմատական պատկերը Սիրիայում (մինչև 2012 թ.) և ՀՀ-ում (2014 թ.) (%)

Սոցիալական ստատուս	Սիրիա	ՀՀ
1. Ուսանող/ուսանողուհի	4	3
2. Տնային տնտեսուհի	27	20
3. Թոշակառու/տարիքային, հաշմանդամության/	2.5	12
4. Գործազուրկ	0	39
5. Ինքնազբաղված	36	13
6. Տարբեր ոլորտներում աշխատող	30.5	13
Ընդամենը	100	100

[12] 19% ընտանիքներում մեկ անդամը ՀՀ-ում չէ, 14%-ում՝2-ը, իսկ 4% ընտանիքներում բացակայում է երեքից ավելի անդամ:

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է հատկապես գործազուրկի կարգավիճակի կտրուկ փոփոխությունը: Փաստորեն, Սիրիայում հայերը, եթե ունեցել են ցանկություն, և ընտանեկան կամ ֆիզիկական հանգամանքները չեն խանգարել նրանց աշխատելուն, ապա ունեցել են աշխատանք, իսկ ՀՀ-ի գործազրկության ներկա մակարդակը մեծ ազդեցություն է ունեցել նրանց սոցիալական կարգավիճակի վրա. սիրիահայերի 39%-ը չի կարողանում աշխատանք գտնել Հայաստանում: Տնային տնտեսուհու կարգավիճակը ևս հետաքրքիր փոփոխություն է կրել, քանզի Սիրիայում երբեմնի տնային տնտեսուհիներն այժմ Հայաստանում աշխատանք են փնտրում, ոմանք նաև աշխատում են: Փոխվել է նաև ինքնազբաղվածների և տարբեր ոլորտներում աշխատողների հարաբերակցությունը.Սիրիայում հայերն ավելի մեծ ծավալներով են իրականացրել սեփական ձեռնարկատիրական գործունեություն, քան Հայաստանում:

Հանտեսելով ՀՀ-ի սոցիալ-տնտեսական վիճակը՝ սիրիահայերի գործազրրկության նման մակարդակը ինչ-որ չափով (ասում ենք՝ ինչ-որ չափով նաև այն պատճառով, որ աշխատող սիրիահայերի կեսը՝ 50%-ը, Հայաստանում չի աշխատում իր մասնագիտությամբ) կարելի է բացատրել նաև չափահաս սիրիահայերի մասնագիտական նկարագիրը վերլուծելու միջոցով: Աղյուսակ 4-ի տվյալներից երևում է, որ Հայաստանում գտնվող չափահաս սիրիահայերի 31%-ը չունի մասնագիտություն: Իսկ ընդհանուր ցուցակը վկայում է այն մասին, որ նրանց մասնագիտական նկարագիրը բավական բազմազան է՝ ընդգրկելով և՛ հասարակական կյանքի տարբեր ոլորտների մասնագետների (առողջապահություն, կրթություն/գիտություն, մշակույթ և այլն), և՛ սպասարկման ոլորտի մասնագետների՝ (ավտովերանորոգողներ, ձևավորողներ, վարսահարդարներև այլն), և՛արհեստավորների (երկաթագործներ, ոսկերիչներ, դերձակներ և այլն):

Աղյուսակ 4. Սիրիահայերի մասնագիտական նկարագիրը (%)

0.	Մասնագիտություն չունեն	31
1.	Ավտովերանորոգման մասնագետներ	10
2.	Տնտեսագետներ/մաթեմատիկոսներ	9.5
3.	Առողջապահության ոլորտի մասնագետներ	9
4.	Երկաթագործներ/ատաղձագործներ	4.8
5.	Ոսկերիչներ	4.4
6.	Օտար լեզուների մասնագետներ	3.3
7.	Ձևավորողներ	3.3
8.	Դիմահարդարներ/վարսահարդարներ	2.6
9.	Մանկավարժներ	2.2
10.	Դերձակներ	2.2

11. Խոհարարներ	2
12. Երաժիշտներ/երգիչներ	2
13. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետներ	1.5
14. Այլ[13]	12.2
Ընդամենը	100

Սիրիահայերի կրթական մակարդակով ևս որոշ չափով կարելի է բացատրել գործազրկության նման ցուցանիշը: Գրաֆիկ 2-ից տեսնում ենք, որ Հայաստանում գտնվող սիրիահայ չափահաս բնակիչների 40%-ը չունի միջնակարգ կրթություն, 24,5%-ը միջնակարգ կրթությամբ են, և միայն 22,5%-ն ունի բարձրագույն կրթություն[14] (բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն ունեցողների մեջ իգական սեռի ներկայացուցիչներն ավելի են արական սեռի ներկայացուցիչներից): Հարցը դիտարկելով հայկական աշխատաշուկայում առաջարկ-պահանջարկի տեսանկյունից, կարելի է ենթադրել, որ սիրիահայերի առաջարկը համապատասխան չէ տեղի աշխատաշուկայի պահանջարկին, քանի որ ՀՀ-ի այսօրվա աշխատաշու-կան, ելնելով երկրի տնտեսության ներկայիս վիճակից, մեծավ մասամբ պահան-ջում է բարձրագույն որակավորմամբ կադրեր:

Գրաֆիկ 2. Սիրիահայերի կրթական մակարդակը, %



Ինչպես նշեցինք, սիրիահայերի ներուժը մեր երկրում օգտագործելու համար և ընդհանրապես հայրենադարձության մասին խոսելիս հարկավոր է մեկ բանի վրա ուշադրություն դարձնել՝ սիրիահայը ինչքանո՞վ է պատրաստ մնալ Հայաստա-նում: Ըստ հետազոտության արդյունքների՝ հարցմանը մասնակցած սիրիահայերի մեծ մասը՝ 52.2%, հնարավորության դեպքում ընդմիշտ կմեկնի Հայաստանից[15]: Իսկ

[13] Դրանց թվում են նաև հետևյալ մասնագիտությամբ սիրիահայեր՝ իրավաբան ու ֆիզիկոս, գյուղատնտես և էլեկտրիկ, նկարիչ/լուսանկարիչ ու լրագրող, կոշկակար ու վարորդ, կենցաղային ապրանքներ վերանորոգող, զբոսաշրջության ոլորտի մասնագետներ:

[14] Սիրիահայերի 5%-ն ունի միջնակարգ մասնագիտական կրթություն, 8%-ը՝ թերի բարձրագույն:

[15] Այս զանգվածի մեջ մեծ մասը՝ 46%, միջին սերնդի ներկայացուցիչներն են՝ 36-55 տարիքային խումբ, 29%-ը՝ երիտասարդներն են, իսկ ավագ սերունդը մեկնել ցանկացողների 25%-ն է կազմում:

երկրների ընտրությունը, առաջին հերթին, կանգ է առնում Սիրիայի վրա. մեկնել ցանկացողների մոտ 42%-ը մտադրություն ունի վերադառնալ Սիրիա, եթե պատերազմական վտանգն անցնի, և քիչ թե շատ պայմաններ ստեղծվեն բնականոն կյանքը շարունակելու համար: Հաջորդ մեծ զանգվածը թեպետ ցանկանում է հեռանալ Հայաստանից, սակայն դժվարանում է պատասխանել, թե որ երկիր (16.7%): Այլ երկրների ցանկում, ըստ սիրիահայերի մեկնելու մտադրության, հայտնվել են ԱՄՆ-ը, Շվեդիան, Կանադան, Գերմանիան, Ֆրանսիան,Ավստրալիան, նաև Լիբանանը:

Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով կարծես տեղի է ունենում ներսփյուռքյան միգրացիոն շարժում, և հայերը մի համայնքից գնում են մյուս համայնք՝ Հայաստանըհամարելով ժամանակավոր ապաստան: Մինչդեռ Հայաստանում գտնվող սիրիահայ համայնքը՝ իր մարդկային ներուժով, դրական լուրջ ազդեցություն կարող է ունենալ երկրի ժողովրդագրական ներկա մակարդակի վրա: Ժամանակն է, որ Հայաստանը որոշի իր գերակայությունները և ապագայի մասին հստակ պատկերացում ձևավորի. ուզում է բավարար պայմաններ ստեղծել սիրիահայերին հայրենիքում պահելու, հզոր երկիր լինելու համար:

СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ ПОТЕНЦИАЛ СИРИЙСКИХ АРМЯН В РА

АКОПЯН Г. Л.

Резюме

В результате военных действий в Сирии представители сирийской армянской общины мигрируют в Армению, при этом большая часть мигрантов намерена покинуть Республику. Между тем формирование сирийской общины в Армении может положительно сказаться на демографическом уровне республики, о чем свидетельствуют результаты проведенных нами этносоциологических исследований.

THE SOCIAL-DEMOGRAPHIC POTENTIAL OF SYRIAN ARMENIANS IN THE RA

G. HAKOBYAN

Abstract

As a result of the military actions in Syria, the representatives of Syrian-Armenian community migrate to Armenia, besides a great part of migrants intend to leave Armenia. Meanwhile, the formation of Syrian community in Armenia may have a positive impact on the demographic level of the republic. The evidence of which are the results of the ethno-sociological survey made by us.